

ԵԼԵՆԱ ԷԹԱՐՅԱՆ
ԱՐՄԻՆԵ ՄԿՐՏՉՅԱՆ

«ՂԱ ՄԻ ԱՆԵՉՐ ԴԱՇՏ Է» ԱՍՈՒՅԹԸ ԹԵՈՂՈՐ
ՖՈՆՏԱՆԵԻ ԵՎ ԳՅՈՒՆԹԵՐ ԳՐԱՍԻ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մեջքերումները, որոնք գրականության մեջ ծառայում են որպես զեղարվեստական խոսքը կառուցող տեխնիկայի միջոց, որևէ հայտնի կոնտեքստից վերցված տարրեր են, որոնք կիրառվում են մեկ այլ հեղինակի կողմից ամենատարբեր նպատակներով: Շատ դեպքերում այդ մեջքերումները դառնում են նոր համատեքստի բաղկացուցիչ մասը և դառնում դրա այցեքարտը: Նման օրինակ կարելի է հանդիպել նաև 19-րդ դարի գերմանական գրականության ակաճավոր վիպասաններից մեկի՝ Թեոդոր Ֆոնտանեի մոտ: Նրա ստեղծագործությունները համեմված են միայն նրան հատուկ՝ առաջին հայացքից պարզ թվացող, բայց այդ պարզությամբ հանդերձ բազմանշանակ և խորիմաստ մեջքերումներով: Ֆոնտանեի կողմից թերևս ամենահաճախ մեջքերվող՝ «Ղա մի անեզր դաշտ է» ասույթը, որը մենք հանդիպում ենք «Էֆֆի Բրիստ» վեպում, թույլ է տալիս մեզ ենթադրել, թե որքան զանազան տարբերակումներով և տարբեր տեսանկյուններից կարելի է դիտարկել այն: Այն անտեսանելի թելի պես ձգվում է ողջ վեպի միջով, միմյանց հետ կապելով վեպի սկիզբը և ավարտը: «Ղա մի անեզր դաշտ է» նախադասությունը մի քանի անգամ կրկնվում է վեպում միևնույն կերպարի՝ պարոն Բրիստի կողմից. թե վեպի սկզբում, երբ Բրիստ ամուսինները խոսում են իրենց դստեր ապագայի շուրջ, թե արդեն ամուսնացած էֆֆիի ներկայի շուրջ մտորումների ժամանակ: «Ա՛խ, Լուիզե, թող դա: Ղա մի անեզր դաշտ է» - այս նախադասությամբ ավարտվում է վեպը, բայց վերջակետ չի դրվում հեղինակի կողմից առաջ քաշվող խնդիրների շուրջ մտորումներին, ավելին, սրանով հեղինակը բաց է թողնում առկա բոլոր հարցերը և առաջարկում ինքնուրույն գտնել դրանց պատասխանները: Այսինքն, վարագույրն իջեցված է, իսկ բոլոր հարցերը՝ բաց: Ֆոնտանեն այսպիսով արտահայտում է այն տեսակետը, որ կան հարցեր, որոնց պատասխանները գտնելը «անեզր դաշտում» անհնար է: Նա պարզապես անուղղակի կերպով փորձում է ընթերցողի ուշադրությունը սևեռել այդ հարցերի վրա, ցույց տալ, որ այդ հարցերը կան, քանի դեռ գոյություն ունի մարդ արարածը: «Ղա մի անեզր

¹ Fontane, Theodor. "Effi Briest". Romane. München 1969

դաշտ է» ասույթը թերևս կարելի է գործածել ամենատարբեր հանգամանքներում, այն կարծես թե դարձել է թևավոր խոսք, իսկ Գյունթեր Գրասի վեպերից մեկը, որտեղ զլխավոր կերպարը Ֆոնտանեն է՝ մարմնավորված Ֆոնտի կերպարում, հենց այսպես էլ կոչվում է. «Անեզր դաշտ»²: Ինչու՞մ է կայանում այս ասույթի ողջ «հմայքը», արդյո՞ք այն իսկապես այդքան կարևոր նշանակություն ունի և մի՞թե մենք չենք հասնում ժայռահեղության, երբ այն դիտում ենք որպես «էֆֆի Բրիստ» վեպում արծարծվող ամենակարևոր ու առանցքային հարցերից մեկը: Այս ասույթի մասին խոսելիս իհարկե առաջինը հայացք ենք դարձնում դրա հեղինակին՝ պարոն Բրիստին: Ծեր Բրիստը, որը բնորոշվում է որպես շրջապատի կողմից «ոչ լուրջ ընդունվող անձնավորություն»³, վեպում բոլոր կերպարներից առանձնանում է հատկապես իր շատախոսությամբ և բազմիմաստ ակնարկներով: Այս տեսանկյունից նրա կողմից անընդհատ կրկնվող «Դա մի անեզր դաշտ է» ասույթը վտանգվում է դիտարկվել որպես դատարկաբանություն, անտեղի ասված մի արտահայտություն, որով պարոն Բրիստը ամեն անգամ խուսափում է լուրջ խոսակցություններից: Սակայն նման արծարծումը չի կարող ճշմարտացի լինել, քանի որ Բրիստը իր հեղինակի՝ Ֆոնտանեի «ես»-ն է և մարմնավորում է նրա հատկանիշները: Այս մասին Թոմաս Մանը գրում է. «Հաճախ մենք կարծես թե լսում ենք Դուբսլավ Ֆոն Ծթելիլիսի կամ Ժեր Բրիստի ծայները, որոնք մեզ նշան են տալիս, և մենք նկատում ենք, թե որքան շատ ընդհանրություններ ունեն այդ ազնիվ ու թերահավատ մարդիկ իրենց հեղինակի հետ»⁴:

Իհարկե քիչ չեն մաս այն կարծիքները, որոնք համաձայն «Դա մի անեզր դաշտ է» ասույթը դիտվում է որպես պարզամիտ դատարկաբանություն⁵, որի հեղինակը՝ պարոն Բրիստը, համարվում է անկայուն ու թույլ մարդ, որը «ի զորու չէ լուծել սեփական խնդիրները, այդ պատճառով թաքնվում է այդ ասույթի ետևում»⁶: Այնուամենայնիվ, ինչու՞ է լռում պարոն Բրիստը ամեն անգամ, երբ խոսվում է այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսին են օրինակ կին-տղամարդ հարաբերությունները, ամուսնական կյանքում կնոջ դերը, մարդկային հավատարմությունը: Այս հարցերը մեր առջև բաց են անում հնարավոր լուծումների ու տարբերակների մի անեզր դաշտ, որտեղ պատասխաններ գտնելը գրեթե

² Grass, Günter: Ein weites Feld, Göttingen: Steidl Verlag 1995

³ Reiser, Hans-Peter, Siegler, Rainer: Stundenblätter "Effi Briest". Stuttgart: E. Klett Verlag für Wissen und Bildung, 1993, էջ.54.

⁴ Mann, Thomas: Noch einmal der alte Fontane. GW IX, էջ. 818.

⁵ Verchau, Ekkehard: Theodor Fontane. Individuum und Gesellschaft. Ulstein-Taschenbuch-Verlag 1983, S.199

⁶ Negt, Oskar: Der Fall Fonty. Steidl Verlag Göttingen 1996, էջ 7

անհնար է, և գիտակցելով սա՝ մենք լռում ենք: Ահա թե ինչ է ասվում «Շթեխլին» վեպում. «Խոսելը իր ժամանակն ունի, լռելը՝ իր»⁷: Նախանշելով, որ պարոն Բրիստը Ֆոնտանեի սեփական «ես»-ն է, կարելի է միայն նրա լռությունը մեկնաբանել այսպես. պարոն Բրիստը լռում է և նա իր այդ լռությամբ ասում է ամենակարևորը՝ ճշմարտությունը, որը երբեք չի արտահայտվում երկար ու բարակ խոսքերով, պերճ արտահայտություններով: Պարոն Բրիստը ամեն անգամ եզրափակում է զրույցը, մեջբերելով «Պա մի անեզր դաշտ է» ասույթը, քանի որ նա գիտի, որ կան հարցեր, որոնք չունեն պատասխաններ, և դրանց մասին խոսելը նույնն է, ինչ թափառելը անծայրածիր դաշտում: Այս ամենին հավելենք նաև այն փաստը, որ Ֆոնտանեի ստեղծագործություններում խոսելը մեծ նշանակություն ունի, զրույցի միջոցով կերպարները հասնում են փոխըմբռման միմյանց նկատմամբ: Երկխոսության այդ դրվագները կարծես թե «երջանկության կղզիներ են, որոնց վրա վեպի հերոսները հանգստանում են»⁸: Եթե էֆֆին ու Ինշթեթենը հաճախակի խոսեին ամուսնական առօրյայում ծագող խնդիրների շուրջ, միգուցե նրանց ամուսնությունը այլ ընթացք ստանար: Միայն մեկ անգամ կարծես անկեղծ զրույց է բռնկվում նրանց միջև (նրանք տուն են վերադառնում Քրամփասի բեմադրած ներկայացումից հետո, որտեղ էֆֆին խաղում էր զլխավոր հերոսուհու դերը), սակայն Ինշթեթենը խուսաճակում է այդ զրույցից, և այդ կիսատ թողնված զրույցն արդեն շարունակում է Քրամփասը, քանի որ նա կանացի հոգեբանության հմուտ գիտակ է և գիտի ասել այն, ինչ կուզենար լսել կինը:

Գիրքն ընթերցելիս ծագում են շատ տարբեր հարցեր, օրինակ, թե ինչու այդքան տխուր ավարտ ունեցավ առաջին հայացքից անթրի թվացող այդ զույգի ամուսնությունը, ո՞վ է մեղավոր դրանում, կկարողանա՞ր էֆֆին մինչև վերջ ապրել առանց խղճի խայթի, եթե Ինշթեթենը պատահմամբ չկարողար նրա ու Քրամփասի նամակները, ի՞նչ կլիներ, եթե մենամարտում Քրամփասի փոխարեն ընկներ Ինշթեթենը. սրանք հարցեր են, որոնք առաջանում են յուրաքանչյուր ընթերցողի մոտ և որոնց շուրջ կարելի է միայն ենթադրություններ անել, սակայն հստակորեն պատասխանել, թե ինչ կլիներ, եթե... , ի զորու չէ ոչ ոք. դա մի անեզր դաշտ է: Այստեղ խոսքը գնում է պարզապես մարդ-հասարակություն, կին-տղամարդ փոխհարաբերությունների և դրանցից բխող ամենատարբեր իրավիճակների մասին: Առանձնացնելով վեպի հատկապես այն հատվածները, որտեղ մեջբերում է «Պա մի անեզր դաշտ է» ասույթը՝ կարելի է ստանալ հեղի-

⁷ Fontane, Theodor: "Stechlin". Werke in zwei Bänden, Bd II, էջ 24

⁸ Renz, Christine. Geglückte Rede, München 1999, էջ 187

նակի կողմից առաջադրվող բոլոր բաց հարցերի ու բոլոր ժամանակներում արդի խնդիրների ընդհանուր պատկերը՝

- ամուսնական կյանքում կին—տղամարդ հարաբերությունների
- տղամարդու ու կնոջ անահամատեղելիության
- հավատարմության, որը բնորոշ է կենդանիներին
- մարդկային դատողության ու տրամաբանության սխալակամության:

Այս ամենի մասին խոսել առանձին շատ հետաքրքիր է, և մենք շուտով կհամոզվենք, որ մեր առջև հիրավի բացվում է մի հսկայական, անեզր դաշտ: «Չարսահիքը լավ բան է, մանավանդ երբ այն քոնը չէ»⁹, սրամտում է պարոն Բրիստը՝ իր հեղինակի անունից հաստատելով այն փաստը, որ ցանկացած ամուսնություն համարձակ քայլ է դեպի անորոշություն: Ինքը՝ Ֆոնտանեն, գրում է իր որդուն. «Պետք է սպասել, թե ինչպես կգարգաման դեպքերը, նախօրոք հաշվարկներ անելը ոչնչով չի օգնի»¹⁰: էֆֆին նույնպես դիմում է համարձակ քայլի, թեպետ նա ամուսնանում է ավելի շատ անգիտակցաբար՝ ելնելով ծնողների կամքից: 17-ամյա էֆֆիի համար Ինշթեթենը կատարյալ անձնավորություն է, որովհետև նա իսկական ջենթլմեն է, խելացի, և նրան սպասվում է մեծ ապագա: Թվում է, թե առկա են բարեկեցիկ կյանք և ընտանեկան երջանկություն ունենալու բոլոր նախադրյալները, բայց արդեն հարսանիքից երեք օր անց պարոն Բրիստի և նրա կնոջ միջև ընթացող զրոյցը մատնանշում է արդեն վեպի ավարտը՝ էֆֆիի ամուսնության մոտալուտ վախճանը: Նրա հայրը այն կարծիքին է, որ իր «նատուրկինդը»¹¹ կտանջվի և իրեն ճնշված կզգա ամենագետ ու սկզբունքային Ինշթեթենի կողմից: Եվ իսկապես, հենց այդ օրը էֆֆիից հեռագիր է գալիս, որտեղ նա պատմում է իրենց ամուսնական ճամփորդության մասին: Միայն փաստեր, թվեր, թանգարանների և պատմական վայրերի անվանումներ, ահա ամենը, ինչ գրում է էֆֆին, և տողերի արանքից կարելի է կարդալ հոգնածություն, առաջին հիասթափության նշույլներ, քանի որ էֆֆիի մոտ չի զգացվում այն հոգու բերկրանքը, երջանկությունը, որը սովորաբար ունենում են նորապսակները մեղրամսի մեջ: Այսպիսով, էֆֆին առաջին իսկ օրվանից զգում է իր հանդեպ ամուսնու առավելությունը, և դա նրա մեջ ծնում է անվստահություն, թերարժեքության զգացում, վախ, տարակուսանք: Նա իր սեփական տան մեջ իրեն զգում է ինչպես հյուր, հասարակության մեջ նա իրեն վախվորած է պահում, այնինչ ամուսնու պաշտոնը նրան թելադրում է լինել առաջին տիկինը քաղաքում: Սակայն պետք չէ այս ամենի մեջ տեսնել միայն Ինշթեթենի մեղավորությունը, նա օժտված է շատ դրական հատկանիշներով և

⁹ Fontane, Theodor: "Effi Briest", Romane, München 1969, էջ 27

¹⁰ Fontane, Theodor. An Friedrich Fontane, 12.08.1886, Br. HD, S.215

¹¹ Naturkind- բնության զավակ

բնավ հակված չէ ստորացնել էֆֆիին՝ ի ցույց դնելով իր ողջ արժանիքները: Ավելին, նա սիրում է իր կնոջը, ավելի ճիշտ, «նա համոզված է, որ սիրում է, և այդ պատճառով նրա խիղճը հանգիստ է»¹²: Պարզապես էֆֆիին չի կարողանում ինքն իրեն խոստովանել, որ չի սիրում իր ամուսուն, նրա հանդեպ չի զգում կիրք, իսկ Ինչթեթենի զուսպ վարվելակերպը, գործնական դատողությունը և լրջությունը ավելի են խորացնում նրանց միջև բացված անդունդը: Նրանց ամուսնությունը ի սկզբանե դատապարտված էր կործանման, և միայն Քրամփասի հետ ունեցած միջադեպը չէր, որ նպաստեց դրան, այլ հենց իրենք՝ էֆֆիին ու Ինչթեթենը: Այս դեպքում խոսքը գնում է կին-տղամարդ դժվարին համատեղելիության մասին: Հարկ է նշել, որ Ֆոնտանեի գրեթե ոչ մի վեպում չկան բացարձակ դրական կամ բացասական կերպարներ, նրա հերոսները ունեն և՛ մարդկային թուլություններ, և՛ օժտված են տարբեր դրական հատկանիշներով: Ինչթեթենը գեղեցիկ տղամարդ է, կիրք է, բանիմաց, բայց անգիտակ ու անընթացաբան երիտասարդ կնոջ հոգևոր պահանջների նկատմամբ, էֆֆիին երիտասարդ է, գեղեցիկ, մանկան մեծան անմեղ, բայց զուրկ է սքափ դատողությունից և չունի հաստատուն սկզբունքներ: Բնավորությունների անհամատեղելիությունը հիմնականաբար հիմք է հանդիսանում կնոջ և տղամարդու միջև հարաբերությունների խզմանը: Իր ինքնակենսագրականում Ֆոնտանեն գրում է. «Կարևորը համապատասխան զուգընկեր ընտրելն է, և եթե այս հարցում բախտդ բերի, երջանիկ կլինես»¹³: Չնայած չի բացառվում նաև այն տարբերակը, որ իրարից շատ տարբեր մարդիկ համատեղ կյանքի ընթացքում մերժեցնան, ու նրանց միջև առաջանա ամուր հոգեբանական կապ, կամ էլ հակառակը, միևնույն բնավորությամբ մարդիկ մույնպես վտանգված են օտարանալ իրարից: Ոչ ոք երաշխավորված չէ դեպքերի մեծ ընթացքից, իսկ երկար-բարակ ծանրութեթև անել, այսպես կոչված «տասը չափիր, մեկը կտրիր» տարբերակով կյանքի ընկեր ընտրել և չսխալվել, թերևս միայն ընտրյալներին է հաջողվում: Այստեղ մույնպես բացվում է հնարավոր տարբերակների ու լուծումների մի մեծ դաշտ: Արդեն էֆֆիի ամուսնությունից մի քանի օր անց պարոն Բրիստը, կնոջ հետ զրույցը ևս մեկ անգամ իր հայտնի ասույթով եզրափակելով, ընթերցողի առջև կարծես թե խնդիր է դնում գուշակել, թե ինչպես կծավալվեն հետագա դեպքերը:

Պարոն Բրիստի կողմից մեջբերվող ասույթը մենք հանդիպում ենք նաև, երբ խոսքը գնում է հավատարմության մասին, և այստեղ շեշտը դրվում է մի շատ կարևոր թեմայի՝ մարդ-կենդանի հարաբերությունների վրա: Ինչթեթենի

¹² Fontane, Theodor: "Effi Briest", Romane, München 1969, էջ 205

¹³ Fontane, Theodor: Von Zwanzig bis Dreissig. Autobiographisches. F. Fontane & Co., Berlin 1898, էջ 115

շունը՝ Ռուլլոն, էֆֆիի կյանքում շատ կարևոր դերակատարություն է ունենում: Առաջին իսկ հանդիպումից նրանց միջև ամուր կապ է ստեղծվում, Ռուլլոն էֆֆիի համար դառնում է ուղեկից, պաշտպան: Ռուլլոն գրեթե միշտ էֆֆիի հետ է, նա նրան երբեք մենակ չի թողնում և եթե նա էֆֆիի հետ չէ, ապա դա ինչ-որ բան է հուշում վերջինիս կարգավիճակի մասին: Միայն Ռուլլոն է, որ էֆֆիին պաշտպանում է, երբ նա զարհուրած վեր է թռչում քնի միջից՝ ահաբեկված չինացու ուրվականից, հավատարիմ շունը միշտ իր տիրուհուն ուղեկցում է զքոսանքների ժամանակ, իսկ նրա բացակայության ընթացքում վտանգը և անթույլատրելի իշխում են էֆֆիի վրա (Քրամփասի հետ հանդիպելու ժամանակ էֆֆին Ռուլլոն իր հետ չի վերցնում, սա խորհրդանշում է, որ էֆֆին առանց Ռուլլոյի անպաշտպան է): Ռուլլոն հավատարիմ է մնում էֆֆիին նույնիսկ այն ժամանակ, երբ նա հեռացած է լինում Ինչթեթենից, և նրան չի դավաճանում: Այս փաստը ևս մեկ անգամ ապացուցում է, որ կենդանիները մարդկանցից հավատարիմ են: Պարոն Բրիստը համեմատում է մարդկանց և կենդանիների և գալիս այն համոզման, որ «հավանաբար կենդանիները մարդկանցից շատ ավելի լավ են»¹⁴: Եվ իսկապես, հասարակությունը անողոք գտնվեց էֆֆի նկատմամբ՝ չներելով նրա սխալը: Իսկ Ռուլլոն մինչև վերջ հավատարիմ մնաց իր տիրուհուն, նրա մահից հետո հավատարիմ կենդանին չհեռացավ նրա գերեզմանից, և թվում էր, թե «շունը ավելի ծանր է տանում էֆֆիի կորուստը»¹⁵: Ռուլլոյի հավատարմությունը ու նվիրվածությունը էֆֆիին քնքշանք ու սեր է առաջացնում պարոն Բրիստի մոտ այդ կենդանու նկատմամբ, բայց դրա հետ մեկտեղ նա երկակի զգացմունքներ է ունենում, քանի որ նա համոզված է իր կյանքի փորձից, որ «այն մարդը, ով իր կյանքում միայն եսասիրություն, ստախոսություն ու խաբեություն է տեսնում, ապաստան է գտնում կենդանիների մոտ»¹⁶: Սակայն էֆֆին ամեն կերպ կարծես թե փորձում է պաշտպանել իր ամուսնուն, նա թեև իրեն միակ պաշտպան միայն Ռուլլոյին է տեսնում, այնուամենայնիվ պնդում է, որ հարկ եղած դեպքում «իհարկե Ինչթեթենը կպաշտպանի իրեն: Չէ որ նա արժանապատիվ մարդ է»¹⁷: Յոր և դստեր այս զրույցը կարելի է վստահորեն համարել վեպում առանցքային դրվագներից մեկը, քանի որ այստեղ ևս մեկ անգամ շոշափվում է այն բազմաթիվ հարցերից մեկը, որին պատասխան գտնելը դյուրին գործ չէ: Ինչթեթենը չփրկեց էֆֆիին, ինչպես վերջինս էր պնդում, նա չկարողացավ ներել էֆֆիին, որովհետև մեծ բարոյականության տեր մարդ էր: Այստեղ Ինչթեթենը մարմնավորում է հենց հասարա-

¹⁴ Fontane, Theodor: "Effi Briest", Romane, München 1969, S.120

¹⁵ Նույն տեղում

¹⁶ Fontane, Theodor. An Martha Fontane. 09.03.1898. HF IV, 4.701.

¹⁷ Fontane, Theodor: "Effi Briest", Romane, München 1969, էջ 206

կությանը, չամսալով սեփական սրտին, որը, ինչպես նա է խոստովանում, հակված է ներել Էֆֆիին, նա գործում է հանուն կարգուկանոնի, որը հասարակության բարքերի պահպանման ամուր հենքն է: Իսկ Ռոլլոն գործում է բնագաբար, նրա համար չեն գործում հասարակության կողմից սահմանված նորմերը, քանի որ նրա մեջ մարմնավորված է բնությունը: Ինչ է մտածում պարոն Բրիստը և արդյոք նա իր դստեր դժբախտության մեջ տեսնում է նաև հասարակության մեղքի բաժինը, թերևս այս հարցին չի կարելի միանշանակ պատասխան գտնել, քանի որ այս հարցի շուրջ խոսելիս պարոն Բրիստը կրկին խուսափողական պատասխան է տալիս՝ մեջբերելով իր հայտնի ասույթը. «Վերջացրու, Լուիզե, դա մի անեզր դաշտ է»¹⁸:

Այս նախադասությունը կրկնվում է արդեն վերջին անգամ, երբ Բրիստ ամուսինները սգում են իրենց դստեր մահը: Եվ այստեղ առաջին անգամ տիկին Բրիստը արտահայտում է այն միտքը, որ միգուցե Էֆֆիի համար դեռ վաղ էր ամուսնանալը, և նրա դժբախտության մեջ իրենք՝ ծնողներն են մեղավոր: Սակայն պարոն Բրիստը համաձայն չէ նրա հետ, նա եզրափակում է զրույցը՝ կրկին մեջբերելով իր հայտնի ասույթը, որտեղից կարելի է բխեցնել այն հետևությունը, որ այստեղ նույնպես բացվում է մի անեզր դաշտ, որտեղ մեղավորներ ու անմեղներ գտնելը այնքան էլ դյուրն չէ: Ի դեպ, տիկին Բրիստի ինքնաքննադատությանը երկակի պատասխան է տրվում. Ռոլլոն, որ մինչ այդ անշարժ պառկած էր Էֆֆիի գերեզմանի առջև, բարձրացնում է իր գլուխը և տարուբերում այն ի նշան անհամաձայնության, իսկ պարոն Բրիստը չի փորձում անգամ ակնարկել, որ այս ամենի մեջ որևէ մեկը ունի մեղքի իր բաժինը: Ամեն մարդ գործում է՝ կառավարվելով սեփական դատողությամբ, «Էֆֆի Բրիստ»-ում չկան բացարձակ բացասական կերպարներ, որոնք գործում են իրենց խղճի դեմ, եթե իհարկե բացառենք Քրամփասին, որը սակայն առանց Էֆֆիի համաձայնության այդքան հեռու չէր գնա: Այստեղ միակ մեղավորը թերևս Էֆֆին է, քանի որ նա գիտակցաբար ընտրեց զարտուղի ճանապարհը և գիտեր, թե ինչ է սպասվում իրեն, այդ պատճառով էլ նա հնազանդորեն ընդունում է բոլոր զրկանքները որպես հատուցում գործած մեղքերի և կյանքից հեռանում է «Ինչթեթեմի ու աշխարհի հետ հաշտված»¹⁹: Բայց արդյոք Ֆոնտանեն քար է նետում իր հերոսուհու վրա՝ դատապարտելով նրան մահվան, քանի որ նա դրանով պետք է իր պատիժը կրի: «Խեղճ Էֆֆի», այսպես է Ֆոնտանեն նրան դիմում, և մենք մկատում ենք վերջինիս կողմից խոր համակրանք Էֆֆիի հանդեպ:

¹⁸ Fontane, Theodor: "Effi Briest", Romane, München 1969, էջ 405

¹⁹ Fontane, Theodor: "Effi Briest", Romane, München 1969, էջ 382

Յետևաբար, Ֆոնտանեն պարոն Բրիստի միջոցով արտահայտում է իր տեսակետը, ըստ որի ոչ ոք երաշխավորված չէ սխալներից, այնպես, ինչպես սուվերը ուղեկցում է Լույսին, այնպես էլ մոլորությունը ու սխալմունքը մարդկային էության անբաժանելի մասն են: «Ամեն մարդ մնում է այնպիսին, ինչպիսին որ կա, և ոչ ոք չի կարող դուրս գալ իր սուվերի միջից»²⁰: Վեպում էֆֆին պետք է մահամա ոչ թե մեղքերի հատուցման համար, այլ այն պատճառով, որ նա հասարակության համար արդեն գոյություն չունի: Եվ այստեղ ծագում է մի շատ վիճելի հարց, թե ինչ է իրենից ներկայացնում «էֆֆի Բրիստ» վեպը՝ բարոյական խրատ, թե հասարակության բարքերի դեմ բողոք: Ֆոնտանեի համակրանքը միանշանակ իր հերոսուհուն է պատկանում, իր «խեղճ էֆֆին», բայց այդուհանդերձ նա չի արդարացնում նրա քայլը և ավելին, այլ տարբերակ չի թողնում իր հերոսուհու համար, բայց նաև այս վեպը ավելի շատ ռեալիստական է նրանով, որ հեղինակը չի փորձում փոխել իրականությունը: Բազմիցս կարելի է նկատել մեղմ ծաղր իրականության թելադրած պայմանների ու դրանցով ապրող մարդկանց նկատմամբ (օրինակ Սիդուհայի կերպարը, որը իր պահպանողական ու չափազանց խիստ հայացքների պատճառով հակակրանք է առաջացնում էֆֆիի մոտ): 2009 թվականին էկրանավորված «էֆֆի Բրիստում», որի հեղինակը Յերմինե Յունթերուրթն է, հերոսուհին հպարտ ու գլուխը բարձր պահած անցնում է քաղաքի կենտրոնով: Ֆիլմի նման ավարտը խոսում է հասարակության՝ որպես անընդհատ փոփոխվող և ոչ կայուն երևույթ լինելու մասին: Այս ամենին իհարկե քաջատեղյակ էր Թեոդոր Ֆոնտանեն, իր այս վեպում նա առաջ է քաշում մարդ-հասարակություն և դրանց միջև անընդհատ գոյացող խնդիրները, սակայն չի փորձում այդ խնդիրներին լուծման վերջնական ու անառարկելի ուղիներ գտնել, ավելին, նա համոզված է, որ այդ հարցերը անլուծելի են:

Գյունթեր Գրասի՝ Գերմանիայի վերամիավորմանը նվիրված վերոնշյալ վեպում²¹, ինչպես և «էֆֆի Բրիստում», «անեզր դաշտ» ատյաթը վկայում է դիալեկտիկական մեխանիկա ունեցող երևույթների նկատմամբ միանշանակ դիրքի անհնարինության մասին: Դիթեր Շտոլցը²² իր աշխատության մեջ անդրադառնում է «անեզր դաշտ» արտահայտության միջտեքստային կապերին: Այսպես, նա հղում է աստվածաշնչյան Յեզեկիել գրքի 37-րդ գլխի առաջինից մինչև չորրորդ խոսքերին: Ընդ որում նա տեքստում այս տեղը բխեցնում է Յեզեկիել անվան հիշատակումից՝ սկսած Ֆոնտիի տաքսայի անվանումից,

²⁰ Fontane, Theodor. An Emilie Fontane. 18.06.1879, Br.HD, 170.

²¹ Grass, Günter: Ein weites Feld, Göttingen: Steidl Verlag 1995.

²² Stolz, D., : Nomen est omen. "Ein weites Feld" von Günter Grass. In: „Zeitschrift für Germanistik“, Neue Folge II (1997), S. 321-335:

վերջացած Ֆոնտանեի գործընկեր Գեգելիել անունով թրթակցով: Այստեղ աստվածաշնչյան մարգարեն պատմում է, թե ինչպես էր Տիրոջ առաջնորդությամբ հայտնվել դիակներով լի մի անեզր դաշտում: Նույն գրքի հետագա տողերում խոսվում է Իսրայելի վերամիավորման մասին: Ի միջի այլոց, Շտոլցը այս գլխից է բխեցնում գրքի 37 գլուխների թվաքանակը: Ըստ նրա՝ այն, որ հեռավոր դաշտը մահացածներով լի դաշտ էր, պատահական չէ. սա խոսում է գերմանացի ժողովրդի ոճրագործությունների հետևանքների մշտական առկայության մասին: Որպես «անեզր դաշտի» հետագա աղբյուր՝ Շտոլցը նշում է Գայնեի «Թիվ 1829» /„Anno 1829“/ բանաստեղծությունը, մասնավորապես հետևյալ տողերը. «Այնպես որ ես կարող եմ համզիտ արյունաքամ լինել/ Տվեք ինձ մի ազնիվ, անեզր դաշտ/ Թույլ մի՛ տվեք, որ ես լնեղդվեմ այստեղ/ Այս նեղ քաղքենիական աշխարհում»²³: Այստեղ պատկերվում է բիդերմայերյան ժամանակաշրջանի Գերմանիան, այսինքն սահմանափակ մտահորիզոնով «չափազանց» նեղ, սակայն նյութապես ապահովված քաղքենիների թշվառ աշխարհը: Բանաստեղծության քնարերգական ես-ը կիսվում է այս նեղ աշխարհից փախուստի երազանքներով: Ինչպես գիտենք, նույն երազանքը թևավորում էր նաև Ֆոնտաին, որը Ֆոնտանեի հետքերով երազում էր Շտոլանդիա փախուստի մասին:

Ինչպես հետևում է վեպի վերջին տողերից, Ֆոնտին այլևս չի ցանկանում անմահ²⁴ մնալ: «Ես, համենայն դեպս, տեսնում եմ դաշտի վերջը», - եզրակացնում է նա²⁵: Վեպի ավարտն ակներևաբար բազմանշանակ է. արդյոք նա իր մահվան մասի՞ն է խոսում, թե՞ Գերմանիայի վերջի, իսկ միզուցե և աշխարհի վերջի մասին: Յուրա Օսինսկին²⁶ մեկնում է վեպի վերջին նախադասությունը՝ որպես դիալեկտիկական գործընթացի ավարտ: Սարիա Գելենա Սիլվան²⁷ մեկնում է վեպի ավարտը Գրասի ստեղծագործության ամբողջ համատեքստի ներքո. «Սահմանի այն կողմում՝ Ֆրանսիայում, ուր բնակվում էին Ֆոնտանեի նախնիները, Ֆոնտին, վերջապես, ուղղում է Ֆոնտանեին՝ ասելով, որ, որքան էլ երկար և ծանր չլինեն բանակաճանության ճանապարհները, այնուհանդերձ, պետք է անցնել դրանցով: Առաջադրանքը նման է Սիզիֆոսի առաջադրանքին»²⁸: Սաբինե Մոզերը²⁹ «դաշտի» տակ ենթադրում է ազգային միասնությանը հասնե-

²³ In: Heine, H.: Werke. Bd. I: Gedichte. Frankfurt a. Main 1968, S.123-124. Թարգմ. Ե. Ե. Ե:

²⁴ Անմահության մոտիվը վեպի հիմնական մոտիվներից է:

²⁵ Grass, Günter: Ein weites Feld, էջ 781.

²⁶ Osinski, J/: Aspekte der Fontane-Rezeption bei Günter Grass. In: Fontane- Blätter. 62/1996, S.112-126.

²⁷ Silva, M. H.: Geschichte , Erinnerung und Identität in Grass' Roman „Ein wietes Feld“. In „Runa“ 25, 1996. S. 355-366.

²⁸ Silva, M. H. էջ 364:

²⁹ Moser, S., Günter Grass. Romane und Erzählungen. Berlin 2000, էջ 178-179:

լու գերմանացիների փորձերը, իսկ «դաշտի եզրի» տեսարանը նա բնութագրում է իբրև աճող եվրոպական ինտեգրացիայի վերջ, որը միաժամանակ կարող է համարվել ազգային պետության վերջ: Իր աշխատության վերջում նա առաջ է քաշում այն համոզմունքը, որ իրենց ֆեդերատիվ ավանդույթներով և տարածքային ինքնությամբ գերմանացիները պետք է որ մեծ հաջողությամբ հարեն միավորված, «տարածաշրջաններից բաղկացած եվրոպային»:

Որպես «անեզր դաշտ»՝ Գրասի վեպում հանդես է գալիս նաև ճշմարտությունը, գերմանական պատմությունը, հատկապես մեղավորության հարցը, Գերմանիայի միավորումը, բարոյականությունը, պատմության ավելի բարձր իմաստը, պետական շահերը և, ի վերջո, ամուսնությունը: Նշենք, որ վեպի կենտրոնական թեման Գերմանիայի միավորման և մեղավորության միջև պատճառական կապի արծարծումն է: «Ամեն բան չափազանց ճիշտ է,- բացականշում է Ֆոնտիի որդի Թեոն: -Սակայն մեղքը անեզր դաշտ է, և միավորումն էլ ավելի անեզր է, ուր մնաց՝ որ ճշմարտությունը»³⁰: Ինչպես հեղինակի մյուս բոլոր երկերում, այստեղ ևս *հիմնականը մեղքի թեման է*: Սրանից հետևում է, որ Գրասը, ի տարբերություն իր քաղաքական ճառերին, չի կարող և չի ցանկանում միանշանակ լուծում տալ Գերմանիայի վերամիավորման հարցին, այլ դրդում է ընթերցողին խորհել այն բանի մասին, որ մեղքը պետք չէ փնտրել միայն նախկին ԳՂՀ-ում, այլ ավելի շուտ՝ պատմական ամբողջ պրոցեսի ընթացքում: Յենց այդ պատճառով էլ նա կրկնապատկում է իր գլխավոր հերոսի կյանքը՝ զուգադրելով այն Ֆոնտանեի կյանքին և գործունեությանը, որի արդյունքում պատմվող ժամանակահատվածը ձգվում է 150 տարի:

«Անեզր դաշտ» վեպում աչքի է ընկնում այն, որ այստեղ անհողողող տեսակետներ են բախվում իրար: Եվ բացահայտ է, որ, ինչպես Ֆոնտանեն, այնպես էլ Ֆոնտին՝ նույն Գրասը, դրա փոխարեն բարոյախոսում է հանդուրժողականություն և փոխզիջում մարդկային բնույթից բխող բոլոր բախումների համեմատ:

³⁰ Grass, Günter: Ein weites Feld, էջ 295-296